Նախագիծ

Մասնակիցներ՝ Էլֆրիդա Բրուտյան, Միքաելա Մարաշլյան, Անի Սմբաթյան

Ժամկետ՝ 15.11.2023-20.12.2023

Նպատակ՝ Ուսումնասիրել ՀՀ քաղաքացիների իրազեկվածությունը ՀՀ օրենքների մասին:Արդյո՞ք տեղեկացված են հիմնական բնույթով սահմանված օրենքներին:

Քայլեր՝ Կազմել 5-7 հարցից բաղկացած հարցաշար, հարցազրույց վերցնել պատահական անցորդներից:

Հարցեր՝

1. Նշ՛եք սոցիալական ցանկացած 3 խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:
2. Ո՞ր դեպքում է արգելված մինչև 18 տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:
3. Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:
4. Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:
5. Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:

Անձ 1

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   - Երեխաները մինչև 18 տարեկան,անապահով ընտանիքները և զոհված զինծառայողների ընտանիքները:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   -Առանց ծնողի թույլտրությամբ:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   -Չգիտեմ:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Հասարակական կազմակերպությունը իր հետ շահույթ չի հետապնդում:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Ծնողների համաձայնությամբ,իսկ 15 տարեկանից փոքր չի կարելի ընդհանրապես,իսկ15-18 տարեկաններին ծնողների համաձայնությամբ:

Անձ 2

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   -Անչափահասները,հաշմանդամները ու տարիքով շատ մեծ մարդիկ ովքեր միայնակ են:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի**:

-Ծանր ֆիզիկական աշխատանքի դեպքում,ծնողների անհամաձայնությամբ և երբ դասերին խանգարում է:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   -Չգիտեմ:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Հասարակական կազմակերպության գործողությունները հիմնականում պետության կողմից չեն վերահսկվում,բացի այդ եկամուտք չեն հետապնդում::

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Ոչ մի:

Անձ 3

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   -Թոշակառումները,հաշմանդամները և երեխաները:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   -Եթե այդ աշխատանքը թույլատրված չէ:Օրինակ՝ ծխախոտ,ալկոհոլ կամ այնպիսի վայրեր են,որտեղ չի կարելի որ անչափահասը աշխատի:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը**:

   -Չգիտեմ:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Իրականում տարբերվում է չափորոշիչները ուրիշ են թե՛ աշխատավարձ,սոց փաթեթ թե՛ գրանցում,ամեն ինչ:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Ծնողի համաձայնությամբ և երբ մյուս անձը չափահաս է:

Անձ 4

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   -Անչափահասները,թոշակառուները և հաշմանդամները:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   -Եթե աշխատանքը վնասում է իրենց առողջությանը:Եթե խանգարում է իրենց ուսուցմանը և եթե ծնողները դեմ են:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   -Եթե աշխատանքի տեղը ճնշում է աշխատողի իրավունքները,ապա աշխատողը կարող է դիմել արհեստկացական միություն և բողոքել:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Շատ բաներով:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Եթե կողմերից մեկը չափահաս է և երբ ծնողները համաձայն են:

Անձ 5

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   Անձ 5- Երեխաները մինչև 18 տարեկան,ով թոշակ է ստանում այսինքն բավական տարիքով մեծ մարդիկ և Հայաստանում գիտեմ որ տուբերկուլոզով հիվանդ մարդիկ անվճար բուժում են ստանում իրենց ցանկությամբ:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   -Այնպիտի տեղեր որտեղ բավականին լուրջ աշխատանք է գնում:Օրինակ՝ բժշկության մթնոլորտում մինչև 18 տարեկանները չեն կարող հատկապես առանց դիպլոմի:Միայն բժիշկների մասին չի խոսքը նաև այլ բնակավայրերում:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**
   -Տեղյակ չեմ:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Հասարակական կազմակերպությունը անձնական է:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Հնարավոր է երբ մի անձը չափահաս է և ծնողի համաձայնությամբ:

Անձ 6

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   - Հղիները,ռեանիմացիայում պառկածները նաև երեխեքը:

2. **Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   - Որտեղ վաճառվում են ալկոհոլային խմիչքներ:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   -Չգիտեմ:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Պետական կազմակերպությունը պետության նախարարներից է կազմվում,իսկ մյուսը ինքնուրույն:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Չգիտեմ:

Անձ 7

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   -Երեք սոցիալական խումբ՝ դա խոցելի խմբերն են, ֆինանսական առումով, իհարկե տարեցները՝ ովքեր առողջական խնդիրներ ունեն և երեխաները: Իմ ասածը չի բացառում նաև միջին հասակի մարդկանց, եթե նրանց վիճակը ծայրահեղ է:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   -Եթե լիազորված չէ ծնողների կողմից, trafficking-ի տարեր է պարունակում, ինչպես նաև եթե կա աշխատանքի շահագործում:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   -Ժամանակին, իրենք ֆունկցիոնալ առումով կարևոր նշանակություն ունեին և կատարում էին շատ լուրջ աշխատանք, իսկ մեր օրերում… չեմ կարող ասել:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Հասարակական կազմակերպությունը, պետականից նրանով է տարբերվում, որ քաղաքականացված չէ՝ այսինքն ինքը, հանրային բնույթ է կրում ու հանրային հարցերով է զբաղվում, այլ ոչ թե մասնավոր կամ կուսակցական շահերից կամ քաղաքական ինչ-որ շահերից ելնելով:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը**:

   - Ոչ մի դեպքում հնարավոր չէ և ես նույնիսկ ասեմ, որ դեմ եմ մուսուլմանական այդպիսի մի ավանդույթին՝ «բաշի քյարթմա»-ին: Մարդը պետք է ինքը ընտրի իր կողակցին՝ գիտակցված, ինչպես նաև սիրելով:

Անձ 8

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   -Անչափահասները, զինվորները և թոշակառուները:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   -Եթե ծնողը չի թույլատրում տվյալ տեղը աշխատի:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   -Արհեստակցական միությունը ինչ-որ կազմակերպության ներքին գործերը ՝ վարձատրությունը, աշխատանքային պայմանները և այլնը կազմակերպող և կարգավորող գործառույթ ունի:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Հասարակական կազմակերպությունները ստեղծվում են անձանց կամ կազմակերպությունների կողմից առանց որևէ կառավարության մասնակցության: Իսկ պետական կազմակերպությունները ստեղծվում և կառավարվում են պետական անձանց կողմից:

5. **Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   - Ծնողի թույլտվությամբ, մշակույթի և կրոնի թույլատրությամբ:

Անձ 9

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   -Մինչև 18 տարեկան երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, զինծառայողները:

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   - Առանց ծնողների թույլտվության և եթե խոչընդոտի դասերին:

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   - Աշխատողների իրավունքների պաշտպանություն

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   -Պետականը պետությունննա հիմնադրել, իսկ հասարակականը ֆիզիկական անձինք:

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**

   -Ծնողների թույլտվությամբ

Անձ 10

1. **-Նշ՛եք սոցիալական ցանկացած *3* խումբ,ովքեր ունեն անվճար բուժման իրավունք:**

   - Թոշակառուները, հաշմանդամները, զինվորական համակարգը

2. **-Ո՞ր դեպքում է արգելված մինչև *18* տարեկան լրացած անձանց ընդգրկումը աշխատանքի:**

   - Առանց ծնողների համաձայնության, ծանր աշխատանքի դեպքում, եթե խոչընդոտում է կրթությանը

3. **-Ի՞նչ գործառություն ունի արհեստակցական միությունը:**

   - Աշխատողների իրավունքները պաշտպանելու համար:

4. **-Ինչո՞վ է հասարակական կազմակերպությունը տարբերվում պետական կազմակերպությունից:**

   - Օրենքների մեջ է տարբերությունը

5. **-Ո՞ր դեպքում է հնարավոր անչափահասի ամուսնությունը:**
   -Ծնողների համաձայնությամբ

Արյդունք՝ Բնակչության մեծամասնությունը հետաքրքրված չեն իրենց երկրում սահմանված օրենքներով:Տարեց մարդիկ համեմատաբար ավելի ընդունակ էին պատասխանելու հարցերին, քան երիտասարդները:Հիմնական պատճառն այն է՝ որ ՀՀ դպրոցների մեծ մասը չեն դասավանդում իրավագիտություն առարկան: Ինչպես նաև զարմանալի է, որ հարցազրույցին մասնակցող և

աշխատող ֆիզիկական անձանց մեծ մասը տեղյակ չէր արհեստակցական միության գործունեության մասին, մինչդեռ միության հիմնական աշխատանքը ուղղված է հենց իրենց՝ աշխատողներին: